կենդանի հումորի նրա խոր զգացողության մասին։ Պրոֆ. Աբաբ Նամիլովը նշեց, որ հայ գրողներից քրդերեն ամենաշատ թարգմանված է Թումանյանը, որը մեծապես ազդել է քուրդ սովետական գրականության զարգացման վրա։ Մ. Ջանֆլաղայանը խոսեց հայ բանահյուսության ավանդույթների և Թումանյանի ստեղծագործության առնչության շուրջը։ Թբիլիսիի համալսարանի դոցենտ Ա. Խառատյանը զեկուցում կարդաց «Թումանյանը և «Կովկասի գրաքննական կոմիտեն» նյութի մասին։ Ցարական գրաքննության արխիվի ուսումնասիրության հիման վրա նա նշեց այն ավերածությունը, որին ենթարկվել են հայ գրողների, այդ թվում նաև Թումանյանի գործերը, որոնցից շատերի տպագրությունը արգելվել է։

Թումանյանի ամբողջ ստեղծագործական ուղին բնութագրվում է մի տիպական միտումով, ավելի ու ավելի մերձենալ հարազատ ժողովրդին, արտացոլել նրա անցյալն ու ներկան, հոգեբանությունն ու հույսերը, նշեց բանասիրական գիտությունների դոկտոր է. Ջրբաշյանը «Թումանյանը և ժողովրդայնության պրոբլեմը» զեկուցման մեջ։ Թումանյանի ստեղծագործությունը, ասաց նա, մեծապես ընդլայնեց ժողովրդայնության սկզբունքը։

Մինսկի համալսարանի դոցենտ Կ. Խոմչենկոն և Վիլնյուսի համալսարանի դոցենտ Պ. Ուժկալեիսը պատմեցին այն սիրո մասին, որ տածում են բելոռուս և լիտվացի ընթերցողները հայ գրողի հանդեպ։ 12 տարի առաջ հրատարակվեց Թումանյանի գործերի բելոռուսերեն առաջին ժողովածուն, իսկ 100-ամյակի օրերին լույս կտեսնեն գրողի ընտիր երկերը։ Թարգմանական և այլ կարգի միջոցառումներ կլինեն նաև Լիտվայում։ Կիևի համալսարանի դոցենտ Ն. Դեսյատյուկը զեկուցեց «Թումանյանը և Պավլո Տիչինան», իսկ դոցենտ Ղ. Այվազյանը՝ «Հովհաննես Թումանյանը ռուս նախահեղափոխական քննադատության գնահատմամբ» թեմայով, մասնավորապես նշելով, որ նրան թարգմանել են Բալմոնտը, Բրյուսովը և ուրիշներ, որոնք բարձր են գնահատել հայ մեծ գրողին։

Ա. ՂԱՀՐԻՅԱՆ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՔԱՂԱՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

1969 թ. մայիսի 19—23-ը Երևանում տեղի ունեցավ արևելագետների համամիութենական գիտաժողով, որը նվիրված էր Հին Արևելքի քաղաքների առաջացմանն ու ներքին կյանքին (մ. թ. ա. III—I հազարամյակներում), ինչպես նաև տեղական և տարանցիկ առևտրի հարցերին։

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար Մոսկվայից, Լենինգրադից, Թբիլիսիից, Բաքվից, Վիլնյուսից, Դաուգավպիլսից և Դուշանբեից Երևան ժամանեցին մի խումբ արևելագետներ։

Ելույթ ունեցողները իրենց զեկուցումներում կանգ առան Շումերի, Բաբելոնի, Խեթական պետության, Ուրարտուի, Իրանի, Հայաստանի, Վրաստանի և հինարևելյան մի շարք այլ պետությունների քաղաքների ներքին կյանքի և առևտրի հարցերի վրա, ելնելով համաշխարհային արևելագիտության նվաճումներից։

Ի. Մ. Դյակոնովը «Քաղաքի պրոբլեմները Բաբելոնում մ. թ. ա. II հազարամյակում» զեկուցման մեջ վերլուծության ենթարկելով փաստական հարուստ նյութը և նկատի ունենալով, որ Հին Արևելքի քաղաքը արտահայտում է տվյալ ժամանակաշրջանի տնտեսության ձևերի և հասարակության սոցիալական հարաբերությունների յուրահատուկ առանձնահատկությունները, նշեց, որ սեպագիր սկզբնաղբյուրները և պեղածո նյութերը ցույց են տալիս, որ քաղաքը Հին Արևելքում եղել է որոշակի գյուղատնտեսական շրջանի և մասնագիտացված արհեստների կենտրոն, ինչպես նաև ներքին և միջազգային ապրանքափոխանակության և նյութական կուտակման վայր։ Որոշ պայմաններում այն եղել է նաև արքունական-տաճարային տնտեսության և պետական վարչական մարմինների կենտրոն։ Սրան զուգահեռ Հին Արևելքի քաղաքն ուներ նաև համայնական ինքնավարության օրգաններ։ Հին Արևելքում տնտեսական-քաղաքական միավորը եղել է ոչ թե քաղաքը առանձին վերցրած, այլ բնակավայրերի որոշակի մի խումբ, որոնք փոխադարձ տնտեսական կապի մեջ են եղել միմյանց հետ, գտնվել են միևնույն ջրանցքի վրա, որևէ փոքր գետի ավազանում կամ մեծ գետի որոշակի մի հատվածում։ Հետագայում, երբ այդպիսի առանձին հատվածները միավորվում են մեկ կենտրոնացված պետության մեջ և երկրի պաշտպանվածությունը ավելի հուսալի է դառնում, նկատվում է գյուղացիական բնակչության տարածումը կենտրոնական քաղաքների պարիսպներից դուրս, որի հետևանքով առաջանում են քաղաքային փոքր և գյուղական մեծ ընտանիքներ։ Սակայն այն դեպքում, երբ քաղաքային բնակ-

չության որոշ մասը չի ուզում կտրվել գյուղատնտեսական աշխատանքներից, բայց միաժամանակ չի ուզում դուրս գալ նաև քաղաքի պարիսպներից, մեծ ընտանիքներ են առաջանում նաև քաղաքում։

Մ. Ա. Դանդամաևը «Վաճառականների դերը ուշ շրջանի Բաբելոնում» զեկուցման մեջ ցույց տվեց, որ Հին Արևելքի քաղաքների և առանձին պետությունների տնտեսության զարգացման և մշակութային փոխներթափանցման համար կարևոր նշանակություն է ունեցել առևտուրը։ Մ. թ. ա. VII—IV դարերի բաբելական փաստաթղթերում հանդիպում են այսպիսի անվանումներ՝ «արքունական վաճառականներ», «ավագ վաճառականներ», «խոշոր վաճառականներ» և այլն։ Բաբելոնի վաճառականները տվյալ ժամանակաշրջանում զբաղված էին միջազգային առևտրով, մասնավորապես Եգիպտոսից Բաբելոն ներմուծվող ապրանքների տեղափոխությամբ և վաճառքով։ Արքունական վաճառականները զբաղվում էին արքային պատկանող ապրանքների, մասնավորապես ոսկու, բնամթերքների և այլնի առևտրով։ Երկրի ներսում վաճառականները զբաղվում էին ստրկավաճառությամբ, գնում և վաճառում էին անասուններ, ձուկ, գարի և այլն։ Նրանք հաճախ հանդես էին գալիս նաև որպես վաշխառուներ, տոկոսների փոխարեն ստանալով դրամ կամ բնամթերք։ Նրանք միաժամանակ հանդիսանում էին խոշոր հողատերեր և մշակելու համար հաճախ իրենց հողը վարձով տալիս էին ուրիշներին։

Ն. Վ. Հարությունյանի և Կ. Լ. Հովհաննիսյանի զեկուցումը նվիրված էր «Էրեբունի քաղաքը գրավոր աղբյուրների համաձայն» թեմային։ Եթե Հին Արևելքի քաղաքների սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության ուսումնասիրությունը պատմության հնագույն շրջանի համար ունի ընդհանուր նշանակություն, ապա Ուրարտուի քաղաքների ուսումնասիրությունը այդ հարցում ունի խիստ կոնկրետ նշանակություն։ Հանգամանորեն շարադրելով Ուրարտուի հյուսիսում մ. թ. ա. 782 թ. հիմնադրված քաղաք-ամրոցի կառուցման և բնակեցման պատմությունը, զեկուցման մեջ ցույց տրվեց, որ Նորահիմն քաղաք-ամրոցը գտնվելով Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան ծայրամասում, հանդիսանում էր ռազմա-ստրատեգիական կենտրոն Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանները, հատկապես Սևանա լճի ավազանը նվաճելու համար։ Արարատյան դաշտի հիշյալ քաղաք-ամրոցը ռազմա-ստրատեգիական կենտրոն լինելուց բացի հանդիսանում էր նաև խոշոր տնտեսական կենտրոն։ Աչքի են ընկնում պեղումների շնորհիվ բացված գինու մառանները, իսկ նոր գրավոր տվյալներով՝ նաև հացահատիկի շտեմարանները, որոնք իրենց մեծությամբ չեն զիջում Ուրարտուի կենտրոնական շրջաններում կառուցված շտեմարաններին։ Ռազմա-ստրատեգիական և տնտեսական այս կենտրոնը, ըստ սեպագիր աղբյուրների, միաժամանակ հանդիսանում էր նաև կրոնական խոշոր կենտրոն, ուրարտացիների գերագույն գլխավոր աստծու տաճարով և համանման այլ շինություններով։ Սեպագիր սկզբնաղբյուրները պարզում են ինչպես Աղա երկրի (Արարատյան դաշտի), այնպես էլ հիշյալ քաղաք-ամրոցի բնակչության ազգային կազմը։ Պարզվում է, որ Աղա երկրի բնիկների հետ միասին այստեղ ապրում էին ուրարտացիներ, խեթեր, ծուպացիներ, աբելեանեցիներ, բաբելացիներ և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնց երկրները երբևէ ենթարկվել էին ուրարտացիների հարձակումներին։ Քաղաք-ամրոցում կյանքը սկյութացիների արշավանքների հետևանքով ոչ թե ընդհատվել է, ինչպես կարելի էր ենթադրել մի ժամանակ՝ գրավոր և պեղածո նյութերի սակավության պատճառով, այլ տանելով ճակատագրի բոլոր հարվածները, հարատևել ու շարունակում է իր առաջընթացը նաև մեր օրերում, դառնալով Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևան։

Գիտաժողովում բովանդակալից զեկուցումներով հանդես եկան նաև Ա. Ա. Վայմանը («Աշխատանքի նորմերը քաղաքային ծառայության բանվորների համար Բաբելոնում մ. թ. ա. III—II հազարամյակում»), Ի. Գ. Ամուսինը («Դրամական շրջանառությունը հին Պաղեստինում»), Է. Ա. Մենաբդեն («Քաղաքային ինքնավարությունը Խեթական պետությունում մ. թ. ա. II հազարամյակի կեսերին»), Ա. Տ. Լունդինը («Քաղաքը և պետությունը Հարավային Արարիայում մ. թ. ա. I հազարամյակում»), Բ. Ն. Առաքելյանը («Արմավիրի պեղումները»), Գ. Խ. Սարգսյանը («Նոր տվյալներ Սելևկյան Բաբելոնի քաղաքային հողատիրության մասին»), Գ. Ա. Տիրացյանը («Հայաստանի նախահելլենիստական շրջանի քաղաքների հարցի մասին մ. թ. ա. VI—IV դարերում»), Դ. Ա. Խախուտայշվիլին («Իբերիայի քաղաքների առաջացումը և նրանց զարգացումը անտիկ շրջանում») և ուրիշներ։

Հ. ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ